ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը Դամասկոսի հայոց թեմի Առաջնորդարանից խորը մտահոգությամբ տեղեկացավ, որ Իրաքի Մոսուլ քաղաքում հարձակման են ենթարկվել և պայթեցվել հայ և քաղդեական եկեղեցիներ:

Դատապարտելով Իրաքում եկեղեցիների դեմ իրագործված ահաբեկչությունը, որով վտանգվում է քրիստոնյա և իսլամ ժողովուրդների դարավոր խաղաղ համակեցությունը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը կոչ է ուղղում Իրաքի քրիստոնյա ու իսլամ հոգևոր առաջնորդներին ու ժողովուրդներին՝ կամք և գիտակցություն դրսևորելու և կանխելու Իրաքում ստեղծված քաղաքական ճգնաժամին կրոնական բնույթ հաղորդելու վտանգը և միասնական ջանքերով ու եղբայրական սիրով ձեռնամուխ լինելու երկրում միջկրոնական և ընկերային բնականոն կյանքի վերահաստատմանը:

Ս. Էջմիածին,
8 դեկտեմբերի 2004 թ.